ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

_____№ _____
Ձեր N _____

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Աշրաֆյան

Կից Ձեզ է ներկայացվում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) ղեկավարի 28.12.2024թ. թիվ Ե/2024-28.12/1273 գրությունը՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում զորակոչային տարիքի քաղաքացի Արտյոմ Բալաբեկյանին անհրաժեշտ հետազոտության իրականացման հետ կապված խնդրի վերաբերյալ:

Ակնկալում եմ Ձեր հանձնարարականը վերոնշյալ բժշկական կազմակերպությանը, հնարավորինս սեղմ ժամկետում Գրասենյակին և Առողջապահության նախարարությանը տրամադրել պարզաբանում գրությամբ բարձրացված հարցի վերաբերյալ:

Առդիր՝ 3 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Invalid signature

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող՝ Վ. Խաչատրյան
ԲՕՔՎ առողջապահության գլխավոր կազմակերպիչ

Առողջապահության Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
Հեռ.՝ (+ 374 60) 80 80 03 էլ. փոստ՝ info@moh.am

Հեռ.՝ (060) 808003/1217

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am
Ե/2024-28.12/1273
28.12.2024 թ.

ՀՀ Առողջապահության նախարար
Անահիտ Ավանեսյանին

Հարգելի տիկին նախարար,

2024 թվականի դեկտեմբերի 23-ին Կազմակերպությանը դիմած զորկոչիկ Արտյոմ Բալաբեկյանն ահազանգել է այն մասին, որ նույն օրը ցանկացել է «Վանաձոր ԲԿ»-ում սեփական միջոցներով անցնել ռենտգեն հետազոտություն, սակայն բժշկական կենտրոնում վերջինիս հայտնել են, որ **«ՀՀ առողջապահության նախարարությունից ունեն հստակ հրաման» այն մասին, որ առանց ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման կողմից համապատասխան ուղեգրման զորակոչային տարիքի անձանց իրավունք չունեն հետազոտելու, նույնիսկ առաջին բուժօգնության անհրաժեշտության դեպքում:**

Կազմակերպությունը բազմիցս բարձրաձայնել է խնդրի մասին: Նշեմ, որ բոլոր բժշկական հաստատություններում, որտեղ արձանագրվել են նմանատիպ խնդիրներ, վկայակոչում են ՀՀ առողջապահության նախարարության վերոհիշյալ հրամանը: 2023 և 2024 թվականներին Կազմակերպության և ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչների հանդիպումների ժամանակ ևս խնդիրը քննարկվել է, և ձեռք է բերվել համաձայնություն, որ զորակոչիկների կողմից

ներկայացրած յուրաքանչյուր խնդիրներով Կազմակերպությունը կդիմի ՀՀ առողջապահության նախարարությանը:

Չնայած Կազմակերպության կողմից յուրաքանչյուր զորակոչիկի խնդրով առանձին ՀՀ առողջապահության նախարարությանը դիմելու արդյունքում որպես կանոն դրանց տրվում են լուծումներ, մասնավորապես՝ զորկառչիկները հնարավորություն են ունենում սեփական միջոցներով անցնել բժշկական հետազոտություններ, սակայն որպես համակարգային խնդիր այն դեռևս մնում է չլուծված:

Հարկ է նշել նաև, որ *ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Միևնույն ժամանակ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է՝«Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, հաշմանդամությունից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք»:*

Եվս մեկ անգամ արձանագրում ենք, որ զորակոչի կազմակերպման և իրականացման ընթացքում զորակոչիկները բախվում են պատշաճ առողջական սպասարկում ստանալու խնդիրներին, ինչը հանգեցնում է նրանց իրավունքների խախտման:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի դիմում եմ Ձեզ «Վանաձոր բժշկական կոնտրոնի» կողմից վկայակոչված հրամանի օրինակը առկայության դեպքում տրամադրելու հարցով, իսկ դրա բացակայության դեպքում խնդրում եմ հայտնել բժշկական հաստատության կողմից նշված վարքագծի պատճառների մասին:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ն. Մովսեսյան
Էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am